(Չի գործում 2017թվականի ապրիլի 1-ից)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
19/05/2015թ թիվ 65-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«25» հունիսի 2015թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-028

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱՅԻ) ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2015

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո) անդամ ապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ ոլորտում վնաս պատճառած անձին համարում են որպես ալկոհոլի ազդեցության ներքո գտնվող և համապատասխանաբար այդ հիմքով նրա նկատմամբ հետադարձ պահանջ ներկայացնում միայն ալկոհոլի այնպիսի ազդեցության դեպքում, որը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթների, համարվում է ոչ սթափ վիճակ:

2. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ ոլորտում վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) կամ վնաս պատճառած անձի նկատմամբ ավտոտրանսպորտային միջոցի վարումը վարելու իրավունք չունեցող կամ ԱՊՊԱ պայմանագրով լիազորված տիրապետող չհանդիսացող անձին վստահելու կամ ապահովագրական պատահարի պահին ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք չունենալու կամ օրենքով սահմանված կարգով այդպիսի իրավունքից զրկված լինելու հիմքով ծագած հետադարձ պահանջի իրավունքը չեն կիրառում այն դեպքերում, երբ վնաս պատճառվել է հետևյալ պայմաններից որևէ մեկում.

1) վնաս պատճառած անձի կողմից վարորդական վկայական ստանալու համար քննություններին մասնակցելու շրջանակներում՝ քննության ընթացքում,

2) վնաս պատճառած անձի կողմից վարել սովորեցնելու համար նախատեսված ավտոճանապարհին, ուսումնական նպատակով և վարել սովորեցնողի ուղեկցությամբ վարելու ընթացքում, եթե տվյալ ավտոտրանսպորտային միջոցը պատահարի պահին սարքավորված է եղել հատուկ այդ նպատակով և դրա նկատմամբ կնքված է եղել անսահմանափակ լիազորված տիրապետողներով ԱՊՊԱ պայմանագիր,

3) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում վնաս պատճառողի կողմից վարած ավտոտրանսպորտային միջոցը պահպանվող հատուկ տարածք բերման ենթարկելու ընթացքում,

4) ոստիկանության ծառայողի կողմից՝ շտապ բժշկական օգնության կարիք ունեցող անձանց բժշկական հաստատություն տեղափոխելու ընթացքում,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ոստիկանության ծառայողի կողմից այլ անձին (բացառությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը) պատկանող ավտոտրանսպորտային միջոցը վարելու ընթացքում: